Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովվում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդավանի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարինե Ղարագյոզյան

Ուսուցիչ, փոխտնօրեն՝ Գոհար Մուրադյան

Տավուշ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն..... 2
Ներածություն..... 3

Սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

1.1 Հետազոտական վերլուծություն.....4

1.2 Գործնական համատեքստ.....8

1.3 **Հետազոտության ընթացքը……..9**

Առաջարկություն/եզրակացություն.....23
Գրականության ցանկ.....24

Ներածություն

Նպատակը և խնդիրները

ՈՒսուցումն ու ուսումնառությունն սկիզբ են առել դեռևս մարդկության ծագման հետ և մարդու զարգացման հետ էլ անցել հազարամյակներ: Այդ ողջ ընթացքում կրթությունը եղել է տարաբնույթ ու տարաբովանդակ,տարբեր են եղել նաև խնդիրներն ու պահանջները, որակը:Բայց մեկն է եղել մի բան միայն՝ նպատակը, այն է՝ զարգացնել մարդուն, ձևավորել հմտություններ, դարձնել ճկուն մտածող:

Այսօր այլ են կրթության որակը, խնդիրներն ու պահանջները:

Տևական ժամանակ աշխատել եմ դպրոցում,հետևել կրթության ընթացքին (շուրջ 26 տարի) և զգացել, որ այն բարեփոխման կարիք ունի: Խոսքս հետխորհրդային դպրոցի մասին է, որտեղ ուսուցման նկատմամբ ընկալումներն այլ էին (սահմանափակ զուտ առարկայական գիտելիքներ, լրիվ ուսուցչակենտրոն ուսուցում, սովորողի խիստ կախվածություն ուսուցչից, ուսուցիչ-աշակերտ պաշտոնական հարաբերություններ և այլն): Արդի կրթության մեջ մեծագույն խնդիր եմ համարում սովորողի անինքնուրույնությունը, կախվածությունն ուսուցչից, դասապրոցեսից կառչած լինելը:Սա լուրջ խնդիր է, որով պայմանավորված էլ կարող են հանդես գալ այլ խնդիրներ ու խոչընդոտներ ուսման մեջ:

ՈՒսումնառության մեջ շատ ու շատ կարևոր դետալներ կան , բայց ես դրանցից ուզում եմ առանձնացնել մեկը՝ սովորողի ինքնուրույնությունը: Սա մի գործոն է , որով կարևորվում են շատ ուրիշներ, այն է ՝ աշակերտի՝ սովորելու նկատմամբ ցանկության մեծացում, հետաքրքրությունների լայն շրջանակ, համագործակցություն, ինքնավստահություն, հետագայում՝ ինքնադրսևորվող քաղաքացի և այլն:

Ինչպես տեսնում ենք, սա խնդիր է, և որի լուծման դեպքում ինքնաբերաբար լուծում կստանան նաև նրանից բխող շատ այլ հարցեր:

Խնդիրն ավելի ակնառու է դառնում, երբ այն դիտարկվում է համադպրոցական համատեքստում: Ինքնին հասկանալի է , որ մեկ-երկու դասարանի կամ մեկ կամ մի քանի ուսուցիչների հոգածությամբ հարցը լուծում չի գտնի:Անհրաժեշտ է ավելի ընդհանրական մոտեցում:Ինքս իմ մանկավարժական գործունեության մեջ հայտնաբերել եմ խնդիրը, փորձել գտնել մոտեցումներ, ռազմավարություն, որոնք կներկայացնեմ աշխատությանս մեջ ստորև:

Մտահոգությունս հիմնավոր է դառնում այն իմաստով, որ այս խնդրին դեռևս նախկինում անդրադարձել են շատ առաջադեմ մտածողներ ու հետազոտողներ . սա հիմք է տալիս մտածելու, որ երևույթը համակարգային է:

Հետազոտական վերլուծություն

<<Ինքնուրույն ուսումնառություն>> գրական վերլուծական ակնարկում (Մեյեր Բ., Հեյվուդ Ն., 2008թ.) հեղինակները ներկայացրել են հիմնավորված և խնդրին առնչվող հետազոտություններ՝ մանրամասնելով ինքնուրույն ուսումնառության թողած ազդեցությունը սովորողների վրա:

Ակնարկում վկայությունների միջոցով ընդգծվում են ինքնուրույն ուսումնառության առավելությունները, հատկապես աճող մոտիվացիան: Հեղինակներն ընդգծել են, որ ինքնուրույն ուսումնառությունը չի ենթադրում, որ աշակերտը պարզապես մենակ է աշխատում, և մատնանշել են ուսուցիչների կարևոր դերակատարումը ինքնուրույն ուսուցման իրականացման գործում:

Ակնարկում նշվում է նաև, որ հաջող ինքնուրույն ուսումնառությունը կախված է բազմաթիվ արտաքին ու ներքին գործոններից, որտեղ արտաքին գործոն համարվում է ուսուցիչ - աշակերտ փոխհարաբերությունը, ներքին՝ հմտությունները:

Հեղինակն ի հայտ է բերում ինքնուրույն ուսումնառության առավելությունները՝

- առաջադիմության աճ
- մոտիվացիայի և վստահության ավելացում
- աշակերտների՝ սեփական թերությունների մասին իրազեկվածության աճ և թերությունները շտկելու կարողություն
- ուսուցիչների համար աշակերտներին տարբերակված առաջադրանքներով ապահովելու հնարավորություն
- օտարացմանը հակազդելու միջոցով սոցիալական ներառման խթանում:

Հատկանշական է այն, որ հեղինակների վկայությամբ Նիդեռլանդներում կատարած մի ուսումնասիրության արդյունքում այն ենթադրությանն են հանգել, որ ավելի սահմանափակվող միջավայրերի համեմատությամբ ինքնակառավարվող ուսումնառության միջավայրում աշակերտներն ունեն սովորելու ավելի բարձր մոտիվացիա, սեփական ուսումնառության մեջ ակտիվ ներգրավվածություն և նյութը սովորում են ավելի հաճույքով:

Ըստ հեղինակների՝ կարևորագույն բաղադրիչ է համարվում պատասխանատվությունը ուսուցչից աշակերտին փոխանցելը, բայց դա չի նշանակում, որ աշակերտը պարզապես մենակ է աշխատում. մեծ է ուսուցչի դերը ինքնուրույն ուսումնառության մեջ: Նրանք գտնում են, որ չի կարելի անմիջապես անցնել դրան, այլ պետք է համապատասխան հմտություններ ձևավորել: Սա հիմք է հանդիսանում մտածելու, որ անհրաժեշտ է ընտրել աստիճանական զարգացող ռազմավարություն:

Ակնարկում տեղ գտած ուսումնասիրությունների մեծ մասն իրականացվել է երեք եղանակով՝

1.Ընտրված խմբերում հատուկ միջամտություն է իրականացվում, որից հետո արդյունքները վերլուծության են ենթարկվում:

2.Մի խումբը ենթարկվում է միջամտության, մյուսը՝ ոչ, որից հետո համեմատվում են արդյունքները:

3.Պարզապես ուսումնասիրվում են դեպքերը:

Ինքնուրույն ուսումնառության համար կարևոր տեղ է հատկացվում նաև դպրոցի ղեկավարությանը, քանի որ այդ գործում համադպրոցական մոտեցում է անհրաժեշտ և ուսուցչի, և աշակերտի առումով(վերջին մտքին դեռևս կանդրադառնամ ստորև):

ՈՒսուցման այս եղանակին են անդրադարձել նաև համահեղինակներ Ս. Ռաբաժովան և Խ. Յակուբովան իրենց <<Անկախ ուսուցման մեթոդներ>> գրքում (էջ 204-205):

Ըստ նրանց ՝ անկախ ուսուցումն այն դասընթացն է, որը մարդն ինքնուրույն է անցնում:Այս ուսուցման մեթոդաբանությունից ելնելով՝ կարելի է սահմանել, ուսուցչի կողմից աշակերտին ինքնուրույն և անկախ ուսումնառության համոզման բերելն ու ցանկություն արթնացնելն է , որի արդյունքը պետք է լինի ինքնուրույն ջանքերով ձեռք բերած գիտելիքի ու հմտությունների տիրապետումը:

Գաղտնիք չէ, որ իրականում լիարժեք ուսումնառություն տեղի է ունենում այն ժամանակ , երբ սովորողը լիովին պատրաստ է դրան: Հեղինակներն այն կարծիքին են, որ եթե հնարավոր լինի սովորեցնել այն ամենը, ինչ անհրաժեշտ է և ինքնուրույնորեն անել, ապա դա կլինի ուսուցչի գերազանց նվաճումը:Եվ գտնում են, որ տեղեկատվության որոնման գործընթացը ինքնաբերաբար սկսում է արդյունք տալ նախատեսված բոլոր առարկաների ուսումնասիրության մեջ: Դրա համար էլ անկախ ուսուցումը՝ որպես դասավանդման մեթոդ , հավասարապես հարմար է ցանկացած առարկայի համար և ցանկացած դպրոցում կամ այլ ուսումնական

հաստատությունում:Անկախ ուսուցման հայեցակարգային առավելություններից են այն բնորոշումները, որ

1.Այն սովորելու նկատմամբ ձևավորում է բնական հետաքրքրություն:

2.Սովորողներին օգնում է ձեռք բերել ինքնավստահություն ուսման նկատմամբ:

3.ՈՒսուցչին օգնում է սովորողին սովորական ծրագրային նյութը ուսումնասիրողից դարձնել խորը հետազոտող:

Չնայած ինքնուրույն ուսումնառության ունեցած բազմաթիվ առավելություններին՝ այս աշխատության մեջ հեղինակները բերում են նաև այս մեթոդի որոշ սահմանափակումներ, որոնք են՝

1.Մեթոդը հարմար չէ ցածր տարիքային խմբի ուսումնառողների համար:

2.Նույնիսկ բարձր դասարաններում ուսուցման այս մեթոդը կարող է ձախողվել, եթե սովորողները շահագրգռված չեն գիտելիքի տիրապետմամբ և ակնհայտ է նրանց անտարբերությունը սովորելու նկատմամբ:Թեպետ այստեղ, ինչ խոսք, մեծ է ուսուցչի դերակատարումը:

3.Այս մեթոդի կիրառումն ուսուցչի կողմից պահանջում է չափազանց զգույշ մոտեցում, ինչպես նաև գործընթացի պատշաճ կազմակերպում, քանի որ յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհրաժեշտ է անհատական մոտեցում:

Ինքնուրույն ուսուցումը որպես մեթոդ և ուսումնառության եղանակ ավելի արդյունավետ դարձնելու համար հեղինակները խորհուրդ են տալիս , որ՝

- Ուսուցիչը պետք է իր սեփական պատշաճ օրինակով հետաքրքրություն ցույց տա սովորողներին ինքնուրույն ուսումնառության նկատմամբ:
- Սովորողներին պետք է տրամադրել անհրաժեշտ ռեսուրսներ՝ հագեցած գրադարան, անհրաժեշտ սարքավորումներ և ,ի վերջո, հարմարավետ միջավայր:
- Նաև ուուցիչը պետք է ունենա պրոֆեսիոնալ պատրաստվածություն, օժտված լինի մեթոդիկան կիրառելու հմտություններով:

<<Ինքնուրույն կրթության հոգեբանամանկավարժական հիմունքներ>> (Աբակումով Ի., Երմակով Պ., 2014թ.,Դոնի Ռոստով) աշխատության մեջ այն տեսակետն է հայտնվում, որ ուսումնական գործունեության մեջ՝ թե դպրոցում և թե բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում, ինքնակրթությունը կրթական գործունեության բարձրագույն դրսևորումն է ու ուսման անբաժանելի մասը:

Ինքնուրույն ուսումնառությանն անդրադարձել է նաև ռուս մեծ մտածող, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յ. Դուբենսկին իր

<<ՈՒսումնական մեթոդները որպես ուսումնական գործունեությունն ակտիվացնող միջոցներ>> գրքում (2005 թ.,էջ 59):

Այստեղ արծարծվում է այն կարևոր գաղափարը, որ ինքնուրույն ուսումնառության ընթացքում սովորողը հնարավորություն ունի ընտրելու ինչը և ինչպեսը՝ սահմանելով իր համար ձևը և բովանդակությունը, նաև հնարավորության սահմաններում բարձրացնելով մոտիվացիայի մակարդակը:Այս պարագայում ուսուցիչը չպետք է լինի լոկ առարկայական դասատու, այլ՝ ուսուցիչ-խորհրդատու:Ըստ Յու. Դուբենսկու՝ ուսուցչի գործառույթն է աշակերտին գործնականորեն պատրաստել խնդիրների լուծմանը:Սա դուրս է գալիս ուսուցիչ-աշակերտ հարաբրությունների սահմաններից և դառնում բարդ հասարակական գործընթաց:

2010 թ. ՈՒ. Մեյերը Բրիտանական կրթական հետազոտությունների ամենամյա կոնֆերանսում հանդես եկավ իր <<Ինքնուրույն ուսուցում. մեթոդական վերանայում և նոր ծրագրեր>> հոդվածով, որում ասվում էր, որ 2008 թ-ից ուսումնասիրում է անկախ ուսուցման հայեցակարգը և դրա հնարավոր ազդցությունը սովորողների վրա:Ներկայացնում է ինքնուրույն ուսումնառության տարբեր ասպեկտները, ուսուցման հիմնական տարրերն ու մոդելները, ուսուցիչների ու սովորողների կողմից պահանջվող հմտությունները:

Հեղինակը, մեթոդին տալով առաջնային կարևորություն, հետազոտել է հետևյալ հարցերը.

- Որոնք են անկախ ուսումնառության հիմնական տարրերը:
- Արդյոք կան անկախ ուսուցման տարբեր մոդելներ և որոնք են դրանք:
- Որոնք են արդյունավետ հմտությունները անկախ ուսուցման համար:
- Ինչպես խրախուսել սովորողին:
- Որն է ՏՏ-ի դերը անկախ ուսուցման գործում:
- Ինչպես կարող են ուսուցիչները լավագույնս աջակցել անկախ ուսուցման զարգացմանը:
- Արդյոք աշակերտներն ավելի ինքնավստահ են դառնում իրենց ինքնագիտակցության մեջ:
- Որ ռազմավարությունները կարող են ապահովել անկախ ուսումնառության առաջընթացը:

Այս և նման հարցերի քննարկման միջոցով հեղինակն այն համոզմունքն է հայտնում, որ ինքնուրույն ուսումնառությունը կրթության մեջ դառնում է առաջատար:

Հեղինակը ներկայացնում է իր հետազոտական միջամտության արդյունքները:ՈՒսումնասիրությունը կատարվել է դպրոցահասակ երեխաների

շրջանում:Մի խմբում նյութը բացատրում է ուսուցիչը, մյուս խմբում՝ ուսումնասիրում են ինքնուրույն, նաև ՏՏ-ի բազայի միջոցով, խորհրդակցում, օգտվում գրադարաններից, կատարում ներքին գնահատում, ինքնագնահատում:Եվ սա կատարում են տևական ժամանակ:Արդյունքը միանշանակ ակնհայտ է դառնում:Ինքնուրույն ուսումնառության միջոցով ձեռքբերումն ավելի մեծ էր ու շոշափելի:

Հեղինակը եզրակացնում է, որ գլոբալիզացիայի և մարդկության համար կենսական նշանակություն ունեցող գիտելիքի զարգացման այս դարում ինքնուրույն սովորելու ունակության զարացումը կարելի է համարել էական՝ հասարակական զարգացման նկատառումներից ելնելով:

Եվ մանկավարժական գրականությունը, և, առավել ևս իմ մասնագիտական պրակտիկան վկայում են ինքնուրույն ուսումնառության կարևորության մասին:Բայց ուսումնառութան այս եղանակը, ցավալիորեն, անտեսված է ու ստվերում է մնում մեր իրականության մեջ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Դասավանդում եմ Տավուշի մարզի Բերդավանի միջնակարգ դպրոցում՝ 9-րդ և 11-րդ դասարաններում: Նկատել եմ սովորողների խիստ կախվածությունն ուսուցչից:Նրանք տեղեկույթի հիմնական աղբյուր համարում են ուսուցչին, բոլոր հարցերի պատասխաններն ակնկալում են նրանից, նյութը սովորում ուսուցչի պատմելով: Ինքնուրույնությունը լրիվ կամ գրեթե լրիվ բացակայում է, այդ իսկ պատճառով որոշեցի հենց դա էլ դարձնել հետազոտության առարկա. այն է՝ ինչպես զարգացնել ինքնուրույն ուսումնառությունը սովորողների մոտ:Որպես թիրախային խումբ ընտրեցի 11-րդ դասարանը, քանի որ երևույթը նրանց մոտ ակնառու էր:

Դասարանում սովորում է 16 աշակերտ՝ 7 տղա և 9 աղջիկ. բոլորն էլ ունակ սովորողներ են, ազատ շփվում են, մտքեր ու գաղափարներ արտահայտում, հրաշալի քննարկումներ են անում, հակադրվում մտքերով:Բայց, միևնույնն է, ուսումնառության ընթացքում նրանք ինքնուրույնություն չեն դրսևորում:

Շուրջ երեք ամիս նրանց հետ աշխատել եմ այդ ուղղությամբ, դրսևորել տարբեր մոտեցումներ,հիմնվել տարբեր ռազմավարությունների վրա:Վարել եմ բազմաթիվ դասեր՝ միտված ինքնուրույնությունը խթանելու ուղղությամբ:Ասեմ, որ փորձարարական այդ շրջանում եկա այն համոզման, որ շատ արդյունավետ է աշխատել համագործակցային եղանակով, որը, բացի սովորողին ազատություն ու ինքնուրույնություն տալուց, ունի դրական շատ կողմեր ևս. ապահովում է

ներխմբային սոցիալական շփումը, ձևավորում անձնային դրական որակներ, մղում համարձակության ու ինքնավստահության:Սրանք բոլորը ինքնուրույնությունը խթանող ազդակներ են:

Ինչևէ, 4-5 հոգանոց խմբերով աշխատանքը համարեցի սովորողների ինքնուրույնացման ճանապարհին առաջին քայլը:

Այնուհետև պրպտումների մեջ էի ռազմավարության հարցում. արդյոք որն է այն մեթոդը, որը սովորողին կմղի ինքնուրույն ուսումնառության, աշակերտը կձերբազատվի կախվածությունից, որ ունի ուսուցչի հանդեպ:Փորձեցի նրանց մասնակցությունը դասին հասցնել առավելագույնի:Դասապրոցեսից առհասարակ բացառեցի պատմելու մեթոդը՝ փորձելով կիրառել ավելի ակտիվ ու ներգրավող եղանակներ:

Ընտրեցի համագործակցային ուսումնառության եղանակով հարցադրումների մեթոդը: Նպատակ էի դրել հարցադրումներով գրական տեքստի ինքնուրույն վերլուծական հմտությունների զարգացման հիման վրա զարգացնել ինքնուրույն ուսումնառությունը, հետևաբար հարցերը միտված պետք է լինեն նյութի իմաստային և գաղափարական դաշտերը բացահայտելուն և ինքնուրույն վերլուծական մտածողության խթանման: Ընդ որում, նպատակ դրեցի նաև հարցադրումների կազմումը աստիճանաբար ուսուցչից տեղափոխել դեպի սովորողը:Սա նրանց մի քայլ ևս կմոտեցնի ինքնուրույնության:Այս նպատակին միտված բազմաթիվ դասեր եմ վարել,որոնցից ստորև կներկայացնեմ մի քանի դասի նմուշօրինակներ և կփորձեմ չափել ինքնուրույն ուսումնառության մոտիվացիան և վերջնարդյունքը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ԴԱՍ 1

Ինքնուրույնությունը խթանելու նպատակով հարցադրումների մեթոդը կիրառել եմ Հ. Թումանյանի <<Անուշ>>պոեմի ուսուցման ժամանակ:

Դասի նպատակը՝

1.Ակադեմիական՝ ինքնուրույն սովորել պոեմի բովանդակությունն ու կառուցվածքը:

2.Սոցիալական՝ ինքնուրույն վերլուծել իրավիճակը, համեմատել և գտնել նահապետական գյուղի բարքերի և արդի սովորույթների նմանություններն ու տարբերությունները:

Նախապես հանձնարարել էի կարդալ պոեմը, իմանալ բովանդակությունը, սյուժեն:

Դասարանում սովորողներն ըստ հմտությունների ու կարողությունների բաժանվեցին չորս խմբի, յուրաքանչյուր խումբ ստացավ նախապես կազմված հարցերի իր փունջը:

1-ին խումբը, որում ներառված էին ոչ այնքան ուժեղ սովորողներ՝ ցածր մտածական հմտություններով, ստացան համեմատաբար հեշտ առաջադրանքներ՝ նաև փակ հարցերով(քանի որ առաջին փորձն էր,կազմել էի նաև տարբերակված հարցեր):

1.Ովքե՞ր են Թումանյանի <<Անուշ>> պոեմի հերոսները:

2.Նկարագրիր միջավայրը, որտեղ ապրում են հերոսները:

3.Ի՞նչ <<ադաթ կար էն մութ ձորերում>>:

4.Ինչու՞ այն խախտվեց:

2-րդ խմբի հարցադրումները՝

1.Վերլուծեք այն հատված, որտեղ կոխ են բռնում Սարոն ու Մոսին. ո՞րն էր Սարոյի արարքի դրդապատճառը:

2.՞Ինչ վկայություններ կարող եք բերել՝ ցույց տալու, որ սերը հզոր շարժիչ ուժ է(հղում կատարել այլ ստեղծագործություններից ևս):

3.Ինչ հետևություն եք անում՝ ելնելով ձեր քննարկումից:

3-րդ խմբի հարցերը՝

1.Ինչպե՞ս կգնահատեք Մոսիի արարքը, երբ սպանում է ընկերոջը:

2.Ի՞նչ հոգեվիճակում էր <<մարդասպանը>>. մեկնաբանիր, վերլուծիր հատվածը՝

ՈՒ մարդասպանը դուրս եկավ ձորից,

Դեմքը այլայլված,քայլվածքը մոլոր,

Սարսափ էր կաթում արնոտ աչքերից,

ԵՎ կերպարանքը փոխված էր բոլոր:

3.Մոսին ինչու դարձավ մարդասպան. հիմնավորիր:

4.Ի՞նչ այլընտրանք կառաջարկեիք:

4-րդ խմբի առաջադրանքը՝

1.Ինչպիսի՞ն էին միջավայրը, սովորույթները, որով ապրում էին հերոսները:

2.Մեկնաբանիր Անուշի հոր խոսքերը՝

Ոտ չդնես էլ տունս,

Մրոտեցիր անունս:

3.Ի՞նչ հնարավոր լուծումներ եք տեսնում:

4.Ինչ եզրակացրիք:

Աշակերտները արդեն իսկ դասի էին եկել ուսումնական նյութը լավ տիրապետելով:Հանձնարարությունները ստանալուց հետո սահմանվեց ժամանակ:Խմբերի ներսում սկսվեց քննարկում, որի ընթացքում մոտենում էի,լսում կարծիքները, որոշ հարցադրումներով ուղղորդում:Այդ ամբողջ ընթացքում կատարում էի ձևավորող գնահատում:Կարող եմ արձանագրել, որ առողջ բանավիճային մթնոլորտ էր:Թեման հետաքրքիր էր ՝ ելնելով տարիքային առանձնահատկությունից:Նրանք անգամ փորձում էին արդիականացնել, համեմատել այսօրվա դրվածքի հետ և շատ հետաքրքիր եզրահանգումներ էին անում:

Խմբերը բովանդակային հերթականությամբ պատասխանեցին հարցերին:Նույնիսկ արդիական դեպքերի օրինակներ բերեցին, զուգահեռներ անցկացրին:Կատարեցին հետաքրքիր հետևություններ՝

- Անկաշառ սերը մարդկային ամենազորեղ զացմունքներից մեկն է:
- Միջավայրը որոշիչ ազդեցություն ունի անհատի վրա:
- Ադաթներն ու սովորույթները , ինչպես նաև հասարակությունը ազդում են մարդու ինքնության վրա:

Կատարվեց ձևավորող և միավորային գնահատում, մի խումբը գնահատեց մյուսին:Առաջին անգամ խորհուրդ տվեցի՝ կամավորները կատարեն ինքնագնահատում:Երկու աշակերտ՝ Հասմիկը և Վիկտորիան, ինքնագնահատում արեցին.կարծում եմ ՝ սա էլ ինքնուրույնության մի տարբերակ է:

Դասը հագեցած էր ու շատ հետաքրքիր:Աշակերտները շատ կառուցողական ու իրատեսորեն էին մտածում:Նրանք ոգևորված էին:Այս մեթոդի շնորհիվ նյութը ոչ միայն ավելի լավ յուրացվեց,այլև լավ վերլուծվեց, քան կարող էր լինել պատմելու միջոցով:

Հանձնարարեցի տնային աշխատանք,որտեղ առավել ինքնուրույնաբար կարտահայտեն իրենց մտքերն ու գաղափարները(հավելված 1):

Կարծում եմ՝ վերջնարդյունքի հասա. նրանք հետևություններ արին, եկան եզրակացության՝ մարդը պետք է մնա իր ես-ի կրողը և չդառնա հասարակության, ինչպես նաև սովորույթների գերին:ԵՎ ես, և աշակերտները գոհացանք:

Անկախ ուսումնառության առաջին քայլն արված էր:Դա նրանց շատ հետաքրքրեց:

Նույն նպատակին էր միտված նաև հաջորդ դասը. աստիճանաբար մեծացնել սովորողի ինքնուրույնությունը, ապահովել ուսուցչից հնարավորինս անկախ գործունեություն:

Դաս 2

Թեման՝ Սոցիալական անարդարության թեման Հ. Թումանյանի <<Գիքորը>> պատմվածքում

Սովորողները նախապես հանձնարարություն էին ստացել կարդալ պատմվածքը, իմանալ դիպաշարը, դիտել ֆիլմը, ուսումնասիրել սոցիալական անհավասարությունից բխող դասակարգային պայքարը որպես երևույթ:

Դասի նպատակը՝

1.Ինքնուրույնաբար պարզաբանել ու վեր հանել այն պատճառները, որոնց զոհ գնաց Գիքորը:

2.Մենաբանել՝ Գիքորը որպես հավաքական կերպար:

3.Հակադրել երկու աշխարհները, որոնցում ապրեց Գիքորը. հետևություն անել:

Այսպիսով նպատակ ունեի իրականացնել սովորողների ինքնուրույն ուսումնառությունը խթանող դաս՝ հարցադրումների մեթոդի կիրառությամբ,առավելագույնս հենվելով աշակերտների ներուժի վրա,հնարավորություն տալով նրանց ինքնուրույն արտահայտվելու և բացահայտումներ անելու:

Դասարանը այս անգամ պատահականության սկզբունքով բաժանվեց երեք խմբի: Դասի առաջին փուլում յուրաքանչյուր խմբի տրվեցին որոշակի հարցեր, որոնք հիմնականում բաց հարցեր էին և բազմակարծություն պահանջող:Ակնկալում էի անկաշկանդ բանավեճ, գաղափարների հակադրում, որը կնվազեցներ ուսուցչի դերը՝ մեծացնելով սովորողի անկախությունը:

Մոտեցա խմբերին, բաժանեցի հարցերը, սկսեցին ծանոթանալ հարցերին, խմբի ներսում աշխատանքի բաժանում անել: Այդ ընթացքում բաժանեցի նաև կանաչ-կարմիր քարտեր, որպեսզի աշակերտները միանգամից քարտերով ցույց տան իրենց վերաբերմունքը հնչած պատասխանի նկատմամբ:

1-ին խումբ՝

- Նկարագրել միջավայրը, որին զոհ գնաց Գիքորը:
- Բացատրել երկու աշխարհների բախումը:
- Այդ ճղճիմ միջավայրում գտնել դրականը. հիմնավորել:

2-րդ խումբ՝

- Բացահայտել Գիքորի հոգեկան դրաման:
- Վերլուծել դասակարգային հակամարտության ակունքները:
- Ինչ խորհուրդ կտայիք Համբոյին:

3-րդ խումբ՝

- Գիքորը որպես հավաքական կերպար. երևույթը որպես ցավոտ իրականություն:

- Համեմատություն արդի ժամանակների հետ:
- Ինչ եզրակացության հանգեցիք:

Հարցադրումներն ստանալուց հետո սահմանվեց ժամանակ, սկսվեց բուռն քննարկում:Յուրաքանչյուր խմբում մեկ աշակերտ նոթագրում էր:Այդ ընթացքում ես գրատախտակին գրեցի դժվար հասկանալի բառերի բացատրությունը՝ դուքան, անիրավ, բազազ, քորփա, մունդռիկ...:

Երկրորդ խմբում հետ մնացող աշակերտներ կային՝ Սամվելը և Հասմիկը:Մոտեցա խմբին և նրանց հանձնարարեցի տարբերակված հարց. Ինչ խորհուրդ կտայիք բազազ Արտեմին ու նրա կնոջը:Նրանք երկուսով սկսեցին այդ հարցի քննարկումը, և նկատվեց նրանց ներգրավվածությունը:

Սահանված ժամանակի ավարտից հետո հնչեցին պատասխանները:Խճանկարի մեթոդով ամբողջացավ թեման:Գտան, թե հեղինակն ինչի վրա է դրել շեշտը, թիրախավորեցի ու հայտնաբերեցին հիմնախնդիրը, դեռ ավելին, առաջարկեցին լուծումներ:Սա մի հանգամանք է, որն ինձ հուշեց նրանց ինքնուրույնության աճի մասին:Հաճախ էին դիմում կարմիր քարտերին, այսինքն յուրովի էին մտածում,սեփական մտքեր ու դատողություններ արտահայտում:Ամենաուրախալին այն էր, որ հաճախ հակադրվում էին նաև իմ գաղափարներին, չէին ընդունում իմ այս կամ այն միտքը:Եվ ես իսկապես համոզվում էի, որ ընտրել եմ ճիշտ ռազմավարություն՝ առանց պատմելու համագործակցային եղանակով հարցադրումներ մեթոդը:

Դասն անցավ ակտիվ ու աշխույժ մթնոլորտում, բոլորն ակտիվ ներգրավված էին, անգամ սակավ ներգրավվողները:Թեպետ ամբողջ ընթացքում ուղղորդող հարցեր էի տալիս, կատարում ձևավորող գնահատում՝ նպատակ ունենալով քննարկումը տանել ցանկալի հարթակ:

Զուգահեռներ անցկացրին մեր ժամանակների հետ, գտան ընդհանրությունն ու տարբերությունը, անգամ կարծիք հնչեց թրաֆիքինգի մասին:Առաջարկեցին լուծումներ, հնչեցին բավականին կառուցողական գաղափարներ:

Պահանջված կարգով կատարեցի միավորային գնահատում, խմբերը կատարեցին փոխադարձ գնահատում և բավական հիմնավորված:

Իմացածն ավելի ամրապնդելու, նաև ամբողջացնելու նպատակով հանձնարարեցի տնային աշխատանք. գրել ինքնուրույն աշխատանք՝ <<Գիքորն անարդար միջավայրի զոհ>> վերնագրով:

Այս երկու դասերի,ինչպես նաև միջանկյալ մի քանի այլ դասերի ընթացքում արդեն նկատվում էր ներգրավվածության աճ, մոտիվացիա, ինքնուրույնության

մեծացում:Նպատակ ունեմ այսուհետ սովորողներին ներգրավել նաև հարցեր կազմելու մեջ, որը ևս մի քայլ է ինքնուրույնության կայացման գործում:

Դաս 3

Թեման՝ Ավ. Իսահակյանի <<Աբու-Լալա Մահարի>>պոեմի գաղափարական բովանդակությունը

Նպատակը՝ 1.Բացահայտել մարդկային այն արատները, որոնք չարիքի ակունք են:

2.Գտնել այդ արարքներից խույս տալու ուղիները:

3.Հետևություններ անել մարդկային արատավոր բարքերի վերաբերյալ. փախուստը որպես ոչ ճշմարիտ պայքարի ուղի:

Այս անգամ նպատակ ունեի մի փոքր ավելի ինքնուրույնություն տալ նրանց՝ իրենց մտքերի ու կարծիքների մեջ:Մինչ բուն նյութին անցնելը՝ մեկ ընդհանուր հարցադրում արեցի.բերեք մարդկային արատների օրինակներ,հիմնավորեք, որ դրանք կարող են չարիք ծնել:Հնչեցին բազմաթիվ պատասխաններ՝ սուտը, խաբեությունը, դավաճանությունը, անհավատարմությունը, կեղծիքը, նյութապաշտությունը...Այս մեկ հարցադրումը մեծ ոգևորություն առաջացրեց աշակերտների մոտ և հիմք նախապատրաստեց անցումը պոեմին:

Նրանք նախապես կարդացել էին պոեմը, անդրադարձան նաև նյութին առնչվող թեմայի, այժմ կարող էին քննարկում անել:Բաժանվեցին խմբերի. յուրաքանչյուր խումբ ստացավ առաջադրանք՝ կազմել երեք հարցից բաղկացած հարցաշար մյուս խմբի համար:Առաջադրանքն առաջին անգան էի հանձնարարում՝ նպատակ ունենալով մի գործոնով ևս անկախացնել նրանց:Տրվեց ժամանակ: Մոտենում էի խմբերին, հետևում, ուղղորդում, որպեսզի լինեն նպատակային և բաց հարցեր:Բոլորն առաջարկություններ էին անում, չափազանց աշխույժ էին, ներգրավված:Սահմանված ժամանակն սպառվեց, հարցերը պատրաստ էին:Խմբերը հաջորդաբար փոխանակեցին դրանք:

1-ին խումբ՝

- Հեղինակն ինչն է կյանքում մարդու համար համարում կապանքներ. ինչու:
- Կինը պոեմում. բնութագրիր. հիմնավորիր:
- Հեղինակի վերաբերմունքն ընկերոջ նկատմամբ. ով է իսկական ընկերը:

2-րդ խումբ՝

- Իշխանությունը պոեմում. իշխանական կապանքների ազդեցությունը մարդու վրա:
- Նյութապաշտությունը պոեմում. ինչ կարող է անել ամենազոր ոսկին:

- Ինչ զուգահեռներ է տանում հեղինակը մարդու և օձ- կարիճների միջև, ով էր առավել, ինչու. հիմնավորիր:

3-րդ խումբ՝

- Բացահայտել վառ ապագայի գաղափարը պոեմում:
- Արևը որպես պայծառ կյանքի խորհրդանիշ:
- Ինչ եզրակացրիք:

Հարցադումները բոլորը կազմված էին բաց հարցերից՝ միտված իմաստային ու բովանդակային ինքնուրույն բացահայտումներին:

Քննարկման համար հատկացվեց ժամանակ:Սկսվեց բուռն քննարկում:Մտքեր,կարծիքներ էին փոխանակում:Հաճախ չէին համաձայնվում միմյանց հետ: Ընդգծված երևում էր ինքնուրույնությունը:Նախկինում պակաս ներգրավվող աշակերտները՝ Սամվելը, Սերգեյը և Ամիրանը այժմ հաճույքով մասնակցում էին:Ակնհայտ էր, որ ճիշտ ռազմավարություն է ընտրված:

Գրատախտակին գրեցի նոր բառերի բացատրությունը՝սուրահ, մուճակ, գուլ, ջեհնեմ, ժահր, խոլական, խարազան, անդուլ, անխոնջ...:

Խմբերից կամավորները պատասխանեցին հարցերին:Հաճախ էին կարմիր քարտեր բարձրացնում, հակադրվում միմյանց:Այս դասի ամենահետաքրքրականն այն էր,որ բացահայտեցի մի նոր բան. պարզվում է, որ սովորողները շատ ավելի հետևողական են այն հարցերի նկատմամբ, որոնք իրենք են կազմում:Ավելին, կարծես ամբողջ պատասխանատվությունն էին ստանձնել:Հետևաբար առաջարկեցի , որ իրենք կատարեն գնահատում:Այսպիսով սովորողները հնարավորություն ստացան գրեթե ինքնուրույն դաս վարել, մի բան, որ նախկինում այդպես չէր:Մեծ էր խանդավառությունը:Կատարեցինք դասի ամփոփում. աշակերտները թերթիկների վրա գրեցին իրենց եզրակացությունները. սիրիր մերձավորիդ: Դավաճանությունը չարիք է: Մի եղիր նյութապաշտ: Փախուստը հարցի լուծում չէ:

Որպես դասի թերություն կուզեմ նշել, որ նյութը մեծ էր և ժամանակատար,ստիպված անցումներն ավելի արագ կատարվեցին, որը,իհարկե, ցանկալի չէ:

Քանի որ նպատակ ունեմ սովորողների մոտ խթանել ինքնուրույնությունը, ապա կարող եմ միանշանակ ասել, որ դա հաջողվում է.արդեն նկատվում է անկախ գործունեությունը,զգալի նվազել է կախվածությունն ուսուցչից:

Դաս 4

Նույն նպատակին հետամուտ լինելով՝ կազմակերպեցի հաջորդ դասը:

Դասի թեման՝

Մարդասիրությունը Մեծարենցի պոեզիայում

Դասի նպատակը՝

1.Ծանոթանալ բանաստեղծի <<Ըլլայի՛, ըլլայի՛>> շարքին:

2.Բացահայտել անձնական ծանր դրամա ապրող, բայց և մեծ մարդասիրությամբ տոգորված երիտասարդի հոգեվիճակը, սերը դեպի մարդ արարածը:

3.Արժևորել մարդասիրությունը որպես կյանքի ճիշտ ուղենիշ:

4.Գնահատել անանձնական երջանկությունը:

Քանի որ շարքը կազմված է երեք բանաստեղծությունից, դասարանն էլ համապատասանաբար բաժանվեց երեք խմբի:Առաջին խումբն ստացավ <<Իրիկունը>> բանաստեղծությունը, երկրորդը՝ <<Հյուղը>>, երրորդը՝ <<Հովը>>:

Մեթոդը նույնն էր ՝ հարցադրումներ, բայց մոտեցումն այս անգամ այլ էր.յուրաքանչյուր խումբ ինքն է իր համար կազմում հարցադրումներ այնպես, որ ըստ դրանց կարողանան վերլուծել բանաստեղծության գաղափարը:

Քանի որ բանաստեղծությունները նախապես արդեն կարդացել էին, միանգամից հարցադրումներ կազմելու համար տրվեց ժամանակ:Այդ ընթացքում մոտենում էի, հետևում, ուղղորդում, որ հարցերը լինեն նպատակային,բացահայտող, արժևորող:Բազմաթիվ հարցեր առաջադրեցին: Այս անգամ այնքան ակտիվ էին ու ներգրավված, որ յուրաքանչյուրը մի քանի հարց էր կազմում: Ի վերջո ընտրեցին լավագույն հարցերը և սկսեցին նյութը քննարկել ըստ այդ հարցերի:Ինչպես նկատելի է, ուսուցչի գործոնը հասնում է նվազագույնի՝ սովորողի ինքնուրույնության առումով:Բերեմ հարցերի օրինակներ.

1.Ինչ միտումով է բանաստեղծը շարքը վերնագրել <<Ըլլայի՛, ըլլայի՛>>:

2.<<Հյուղը>> բանաստեղծության մեջ գտնել մարդասիրության գաղափարը:3.<<Հովը>> բանաստեղծության մեջ գտնել մարդասիրության գաղափարը:

4.<<Իրիկունը>> բանաստեղծության մեջ գտնել մարդասիրության գաղափարը:

5.Ինչ իմաստով է մարդասիրությունը հարստացնում մարդու հոգին:

6.Ինչ նպատակով է հեղինակն ասում՝ սա իրիկունն ըլլայի ես:

7.Ինչ ենք հասկանում անանձնական երջանկություն ասելով. ինչով է այն կարևորվում արժեքային համակարգում:

8.Եզրակացություն:

Առաջնորդվելով իրենց իսկ կազմած հարցերով՝ սկսեցին վերլուծել բանաստեղծությունները:Խմբի ներսում բաժանում էին կատարել, թե որ հարցին ով է պատասխանելու, և սա ժամանակի զգալի տնտեսում կատարեց:Հեղինակի հոգեվերլուծության միջոցով բացահայտեցին նրա անմնացորդ նվիրումը

մարդկությանը, մարդ արարածին ծառայելու անհագուրդ ձգտումը:Համեմատեցին հեղինակի անանձնական երջանկությունը սովորական մարդկային երջանկության հետ:Գտան, որ ճշմարիտ երջանկությունը չի սահմանափակվում միայն անձնականի սահմաններում,և որ գոյություն ունի նաև անանձնական երջանկություն:Եզրակացրին, որ իսկական մարդասիրությունը հենց անանձնականով երջանկանալն է, որ դա է մարդկությանը ուղղորդող ճիշտ ճանապարհը:

Պատասխանների ողջ ընթացքում կատարվում էր ձևավորող գնահատում,թեև այս անգամ նպատակահարմար գտա , որ կատարեն նաև ինքնագնահատում, քանի որ դա էլ ինքնուրույնության մեջ մի քայլ է:

Նշեմ, որ ինքնագնահատման մեջ իրենք շատ ավելի խիստ գտնվեցին, քան ես կգնահատեի:Սա խոսում է այն մասին, թե որքան լուրջ են մոտենում ինքնուրույն ուսումնառությանը:

ՈՒզում եմ խոստովանել, որ հետազոտությունն սկսելիս մտավախություն կար, որ չի հաջողվի,քանի որ շատ մեծ էր կախվածությունն ուսուցչից, բայց քայլ առ քայլ նկատելի է հաջողությունը:

Դաս 5

Նույն նպատակին էր ծառայում նաև հաջորդ դաս:

Թեման՝ Սիամանթո. <<Մահվան տեսիլք>> բանաստեղծությունը:

Դասի նպատակը՝ 1. <<Մահվան տեսիլք>> բանաստեղծության գաղափարական վերլուծության միջոցով բացահայտել մարդկության մեծագույն չարիքներից մեկը՝ ցեղասպանությունը:

2.Արձանագրել պատմության՝ այդ էջերից քաղած դասերը:

Թիրախավորել էի հարցադրումների միջոցով ուղղորդելով՝ մղել առավել ինքնուրույն մտածողության ու վերլուծության, բացահայտել սովորողների հնարավորությունները, արձանագրել առաջընթացը, կենտրոնանալ հանձնարարությունների ու առաջադրանքների վրա այնպես, որ դրանց միջոցով աշակերտները կատարեն ինքնուրույն եզրահանգումներ:Ինչպես նաև նպատակ ունեի համագործակցային մեթոդի կիրառմամբ սովորողներին տալ ինքնուրույն առաջընթացի հնարավորություն:

Դասարանը խմբերի բաժանվեց գունավոր փայտիկների միջոցով՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն:

Նյութը, որի հետ պետք է աշխատեին, Սիամանթոյի <<Մահվան տեսիլք>> բանաստեղծությունն էր, որը տպագիր տարբերակով ստացան երեք խումբն

էլ:Նախապես կարդացել էին բանաստեղծությունը, ծանոթացել այլ ժողովուդների ցեղասպանություններին, դրանց հետևանքներին ու հասցրած վնասներին:

Մեկ անգամ ևս հանձնարարեցի կարդալ բանաստեղծությունը, իսկ այդ ընթացքում մոտեցա խմբերին և տվեցի այն առաջադրանքները, որոնց միջոցով պետք է կարողանային վերլուծել նյութը և բացահայտել ցեղասպանություն երևույթն առհասարակ:

Առաջին խմբի հարցերն էին՝

1.Բանաստեղծությունից գտնել կոտորածը նկարագրող հինգ պատկեր:

2.Ինչ տեսանք, ինչ լսեցինք, ինչ զգացինք:

3.Գրեք երեք հետևություն:

Երկրորդ խումբն ստացավ՝

1.Ինչպիսի տրամադրություն է իշխում բանաստեղծության մեջ:

2.Ինչ կոչ է հնչում բանաստեղծի շուրթերից:

3.Գրեք երեք հետևություն:

Երրորդ խմբի հարցերն էին՝

1.Ինչու և ինչպես պետք է պայքարել ցեղասպանությունների դեմ:

2.Գրեք երեք հետևություն:

Հանձնարարություններն ստանալուց հետո սահմանվեց ժամանակ, և սկսվեց քննարկումը: Ամբողջ ընթացքում մոտենում էի խմբերին, լսում նրանց, ուղղորդում, պատասխանում նրանց հարցերին, կատարում ձևավորող գնահատում:Արևմտահայերենի դժվարություններից ելնելով՝ բացատրում էի որոշ բառեր:Փորձում էի սովորողների ուշադրությունը հրավիրել այն հարցերի ու գաղափարների վրա,որոնք կարող էին լինել ցանկալի վերջնարդյունք: Անընդհատ ուշադիր էի Սամվելի, Սերգեյի և Ամիրանի հանդեպ, թեպետ կարող եմ ուրախությամբ նշել, որ նրանք լրիվ ինտեգրված էին խմբում:

Սահմանված ժամանակի ավարտից հետո խմբի անդամներն սկսեցին ներկայացնել իրենց տեսակետները, կարծիքներն ու համոզմունքները:Նրանք իրենք էին սահմանել իրենց պատասխանների հաջորդականությունը, մոտենում էին զույերով,ներկայացնում,լրացնում միմյանց: Առաջին խումբը ներկայացրեց, որ բանաստեղծության մեջ տեսան ջարդ, <<մորթված սերունդներ>> և որ ցավալի է, տեսան մարդկային անտարբերություն:Լսեցին ցավից խելակորույս մայրերի ողբ, հուսահատության ճիչեր: Զգացին անսահման ցավ, վիրավորանք, վրեժի զգացում, պատասխանատվություն:

Երկրորդ խումբը գտնում էր, որ բանաստեղծության մեջ իշխում է ցավի ու հուսահատության տրամադրություն, քանի որ բանաստեղծը տեսնում էր հրի

մատնված երբեմնի ազնվական քաղաքներ, լսում էր հոգեվարքի վերջին աղոթքներ:Բայց ուրախալի էր այն, որ նրանք բացի տխուր նոտաներից, կարողացան գտնել այն հույսի շողը, որ կար ստեղծագործության մեջ, բացահայտեցին, որ բանաստեղծը կոչ էր հղում աշխարհին՝ մտիկ ըրե՛ք, մտիկ ըրե՛ք, մտիկ ըրե՛ք,հույս ուներ, որ անտարբեր մարդկությունը իր դեմք կշրջի դեպի այրվող Հայաստանը:

Առավել հետաքրքրական էր երրորդ խմբի պատասխանը. իսկապես սպասում էի, թե ինչպես կարձագանքեն հարցերին. ինչու և ինչպես պայքարել ցեղասպանությունների դեմ:Նախ նրանք օրինակներ բերեցին այլ ժողովուրդների ցեղասպանություններից՝ հրեաների կոտորածը գերմանացիների կողմից, աֆրիկյան որոշ ժողովուրդների,եզդիների և այլն:Զուգահեռներ անցկացրին, բազմաթիվ ինքնուրույն դատողություններ արեցին,բերեցին պատմական շատ ու շատ փաստեր ու տեղեկություններ, որն ինձ համար հաճելի անակնկալ էր:Անկեղծ ասած՝ չէի սպասում այդքան ինքնուրույն պատրաստվածություն:

Ամենակարևորն այն էր, որ շատ առաջադեմ ու կառուցողական էին մտածում, որ ցեղասպանությունը չարիք է ողջ մարդկության համար, որ դրա դեմ պայքարը պետք է լինի համամարդկային, որ հիշում ենք ու պահանջում:Գտնում էին, որ պարտադիր չէ հայրենիքի համար պայքարել զենքը ձեռքին, այլ պայքարի շատ միջոցներ կան. օրինակ, կարելի է պայքարել լավ սովորելով, դիվանագիտական ատյաններում ձայն բարձրացնելով, այլ հարթակներում պայքարելով:Մ-ն անգամ զուգահեռ անցկացրեց. հակառակ դեպքում էլ որը կլինի մեր ու նրանց տարբերությունը:Եզրակացրին, որ, ի վերջո, բարին կփրկի աշխարհը, և չարը կպարտվի,և որ բոլորս պարտավոր ենք ծառայել բարուն: Այս բոլորն աշակերներիս անկախ դատողություններն էին, ինքնուրույն ձեռք բերված գիտելիքները, մի բան, որ նախկինում երբեք չի եղել:

Դարձյալ կատարեցին ինքնագնահատում:Հանձնարարվեց գրել կապակցված խոսք՝ <<Բարին կփրկի աշխարհը>> վերնագրով:

Վերջնարդյունքում նրանք կարողացան՝

1.Նկարագրել ցեղասպանությունը որպես պատմական իրողություն:

2.Թվարկել իրենց հայտնի այլ ժողովուրդների ցեղասպանություններ:

3.Համեմատել դրանք, կատարել եզրահանգումներ:

4.Հետևություններ անել, արժևորել մարդուն, եզրակացնել, թե ազգամիջյան ինչ փոխհարաբերություններ են ցանկալի, ինչու(օրինակները բերվեցին ապրիլյան պատերազմից նաև):

Նրանց կողմից ինքնուրույն ձեռքբերված տեղեկույթի զգալի պաշարը, ինչպես նաև ինքնուրույն դատողություններն ու գաղափարները, ինքնագնահատում կատարելը վկայում են, որ ռազմավարության ընտրությունը ճիշտ է կատարված:

Հաջորդ դասը, որն անց եմ կացրել նույն մեթոդով, նույնպես վկայում է այդ մասին:

Դաս 6

Թեման՝ Դ. Վարուժան. <<Ձոն>> բանաստեղծությունը

Դասի նպատակը՝ 1.<<Ձոն>>բանաստեղծության գաղափարական վերլուծության միջոցով բացահայտել հայրենիքի կերպարը:

2.Համեմատել հայրենիքի փառավոր անցյալն ու ներկան:

3.Բացահայտել բռնության դեմ ըմբոստացումի հերոսական կոչը:

Ինչպես նախորդ դասերին, այս դասին նույնպես աշխատեցինք խմբերով, քանի որ հարցադրումներով մեթոդն առավել լավ է ստացվում համագործակցային եղանակով:Քանի որ արդեն ունեին այդպիսի փորձ, ընդ որում, հաջողված, ապա որոշեցի, որ այս դասին էլ հարցադրումները կազմեն աշակետները:Ամբողջությամբ ուսումնասիրել էին <<Ցեղին սիրտը>> ժողովածուն, ժամանակաշրջանը, շատերն անգիր գիտեին բանաստեղծությունը:

Այս անգամ խմբերի բաժանվեցին ըստ Հ. Թումանյանի <<Անուշ>> պոեմի տողերի:Յուրաքանչյուր խմբի սեղանին դրվեցին բանաստեղծության տպագիր տարբերակները:Սահմանված ժամանակում սկսեցին քննարկել, հարցեր առաջադրել:Մոտենում էի խմբերին, լսում նրանց,պատասխանում որոշ հարցերի, ուղղորդում, որպեսզի նպատակային ու բացահայտող հարցեր կազմեն:Մասնակցում էին բոլորը:Խմբերից կամավորները ներկայացրին իրենց կազմած հարցերը, որոնք պետք է առաջադրեին մյուս խմբին:

Առաջին խումբ՝

1.Վահագնի երգի <<Ընդ եղեգան փող բոց ելաներ>> տողի մեկնաբանությունը:

2.<<Կրակի և սուրի զոհերի>> արյան կանչը:

3.Ինչպես պայքարել և ինչ միջոցներով, որ այլևս <<կրակի ու սուրի>> զոհեր չլինեն:

Երկրորդ խմբի կազմած հարցերն էին՝

1.Հայրական հանգած օջախի ու <<որբ>> տան պատկերը բանաստեղծության մեջ:

2.Հայ հարսների ողբի պատճառները. պայքարի ուղիները:

3.Բացատրել բանաստեղծի հնչեցրած վրեժի կոչը:

Երրորդ խմբի հարցերն էին՝

1.Պանդխտությունը որպես երևույթ, պատճառները. ինչ թաքնված վտանգներ ունի պանդխտությունը:

2.Որն է այս բանաստեղծության մեջ ըմբոստացումի հերոսական տարերքը:

3.Բացի ֆիզիկական պայքարից պայքարի էլ ինչ ձևեր կարող եք նշել. որն եք նախընտրում:

Երբ հարցերն արդեն պատրաստ էին, խմբերը հաջորդաբար փոխանցեցին միմյանց, այս անգամ նույնիսկ ժամանակն իրենք սահմանեցին, ոչ թե ես:Սահմանված ժամանակում քննարկում էին կատարում, վերլուծում, հարցեր բարձրացնում, երբեմն էլ միմյանց հետ համաձայնության չէին գալիս:Քննարկման ընթացքում գրատախտակին գրեցի որոշ դժվարընկալելի բառերի բացատրություններ՝ անթրոց, հնոցի, հեգ, ընծա, քուրմ, կնյուն:

Ավարտվեց ժամանակը, և խմբերում պատրաստվեցին ներկայացնել պատասխանները:Ինչպես նախորդ դասերին, այս անգամ և.ս պատասխանելու էին ոչ թե անվանակոչվածները, այլ կամավորները:Ես համարում եմ, որ սա էլ սովորողին ինքնուրույնության մղող մի քայլ է. պարզապես ուսուցիչը պետք է լինի ուղղորդողի ու հսկողի դերում , որ պատասխանից խուսափողներ չլինեն, մի բան, որ կարող եմ հստակ ասել՝ չկա:

Առաջին խմբից առաջին հարցի համար մոտեցան երկու կամավոր:Նրանք ներկայացրին մեր հայրենիքի պատմության փառավոր անցյալը, վկայակոչեցին երբեմնի հզոր արքաներին,բացահայտեցին Վահագնի կերպարը որպես ոգեշնչման աղբյուր և պայքարի ուղենիշ:Նրանց խմբակիցները, շարունակելով թեման, անդրադարձան <<կրակի ու սուրի զոհերին>>, գտան, որ դա անմարդկային արարք է առհասարակ մարդկության նկատմամբ:Առաջարկեցին պայքարի ուղիներ, այն է՝ ռազմական, դիվանագիտական, բանակցային և այլն:

Երկրորդ խումբն անդրադարձավ որբացած հայրական օջախի գաղափարին, բացատրեցին, որ հայրական օջախն իր մեջ ունի գաղափարական ու հոգեբանական մեծ ներուժ, որ հայրական օջախից է սկսվում հայն ու հայրենիքը, բացատրեցին նաև իրենց ընկալումները ծնողի վերաբերյալ, գտան, որ կյանքում գերակա արժեքներից մեկն է, արտահայտեցին իրենց նվիրումը ծնողներին:

Երրորդ խմբի անդամներից Սերգեյը, որ նախկինում պակաս ներգրավվող էր, իսկ այժմ չունի այդ խնդիրը, բավական վարժ ու ինքնավստահ ներկայացրեց պանդխտությունը որպես երևույթ:Նա նշեց նախկին և արդի ժամանակների այն պատճառները, որոնք ծնում են այդ երևույթը՝ գործազրկություն, սոցիալական անհավասար պայմաններ և այլն:Բացահայտեց այն վնասները, որ կարող է հասցնել պանդխտությունը՝ անհատի, ընտանիքի և հայրենիքի առումներով:

Այժմ Սերգեյի խոսքը կազմակերպված էր, ինքնավստահ, լիարժեք կարողացավ շարադրել միտքը, փաստեր բերեց:

Նրանք կարողացան գտնել բանաստեղծության հիմնական ազդակը, պայքարի այն կոչը, որ հնչեցրել է բանաստեղծը:Գտան, ամեն պարագայում պայքարի ոգին չպետք է մեռնի:Պատմական անցյալի օրինակներից ելնելով՝ կատարեցին եզրահանգումներ. հույսդ ուրիշի վրա մի դիր: Հույսը վերջինն է մեռնում:

Վերջնարդյունքում սովորողները կարողացան ամբողջացնել հայրենիքի կերպարը, նրա անցյալն ու ներկան, բացահայտեցին պայքարի ուղիներն ու դրանց կարևորությունը:Կատարեցի միավորային գնահատում, երրորդ խումբը իր ցանկությամբ կատարեց ինքնագնահատում:Կարող եմ համարել հաջողված ինչպես այս, այնպես էլ նախորդ մյուս դասերը:

Բացի ներկայացվածներից, բազմաթիվ այսպիսի դասեր ենք անցկացրել:Շուրջ երեք ամիս փնտրտուքների մեջ էի, փորձում էի աստիճանաբար նվազեցնել իմ դերը որպես հենարան:Փորձում էի, որ նրանք դառնան ինքնուրույն, աշխատում էի ապահովել սովորողների ակտիվ ներգրավվածությունը ուսումնառության մեջ:Այժմ կարող եմ ասել, որ նվազագույնին է հասել նրանց կախվածությունն ուսուցչից, ունեն սովորելու ավելի բարձր մոտիվացիա, ուսումնառության մեջ ակտիվ ներգրավված են և, որ ամենակարևորն է, նյութը սովորում են հաճույքով, ինչը չէի կարող ասել նախկինում:Ինչպես երևում է հետազոտության ողջ ընթացքում, ծանրաբեռնվածությունը միանգամից չէ, որ տեղափոխվել է սովորողների վրա, այլ հետզհետե:Երբ արդեն գտա, որ համագործակցային եղանակով հարցադրումների մեթոդը կարող է օգնել ինքնուրույնացման ճանապարհին, որոշեցի աստիճանաբար անցում կատարել:Նախ նոր նյութը թողեցի իրենց՝ կարդալու:Այնուհետև վերլուծությունների մեջ հիմնականում հարթակն իրենց տրամադրեցի: Միառժամանակ հետո անգամ հարցերն սկսեցին իրենք կազմել, փոխադարձ գնահատում կատարել, նաև ՝ ինքնագնահատում: Արդեն կարողանում են բավական գրագետ հետադարձ կապ տրամադրել իրար: Կարողանում են կարևորը տարբերել անկարևորից, խնդիրներ վեր հանել, լուծումներ առաջարկել, եզրակացություններ անել, ինչը ամենակարևորն եմ համարում ուսումնառության մեջ:Այս են վկայում նաև տարբեր թեմաների վերաբերյալ նրանց բազմաթիվ վերլուծական ինքնուրույն աշխատանքները, որոնք կներկայացվեն հավելվածում:

Դասարանի շրջանակում կային նաև թիրախային աշակերտներ, որոնց համար մտավախություն ունեի՝ որպես պակաս ներգրավվող աշակերտների:Բայց համագործակցային աշխատանքը նրանց նույնպես հետաքրքրեց և խմբից

բացարձակապես հետ չմնացին, ավելին, մեծացավ ինքնավստահությունը և կարծես ուսման մեջ նաև ինքնահաստատվեցին:Սա շատ կարևոր է:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը տևական ընթացք ունեցավ, քանի որ հետազոտության առարկան , այն է՝ սովորողի ինքնուրույն ուսումնառության խթանումը, հեշտ գործընթաց չէր, նաև՝ բավական դժվար չափելի : Ընտրեցի նոր ռազմավարություն. ավանդական պատմելու եղանակից հրաժարվելով՝ նյութը հանձնարարել սովորել ինքնուրույն: Այս կերպ ուսուցիչն ավելի լավ է բացահայտում սովորողի տվյալներն ու հնարավորությունները:

Հաջորդ քայլը համագործակցային աշխատանքի կազմակերպումն էր, որի արդյունքում սովորողները դարձան ավելի ակտիվ ու ինքնավստահ, այլևս կախվածություն չունեին ուսուցչից: Նյութի ինքնուրույն վերլուծության համար ընտրել էի հարցադրումների մեթոդը, որը, իսկապես , արդյունավետ էր: Հարցադրումների հիման վրա խմբերում ինքնուրույն քննարկումներ էին անում, վերլուծում, եզրահանգում, և այդ ամենը՝ ինքնուրույն:

Աստիճանաբար հարցեր կազմելը ուսուցչից տեղափոխեցի դեպի սովորողները, որը նույնպես ինքնուրույնության մի դրսևորում է:

Որպես վկայություն կարող են հանդիսանալ նաև դասալսումները մենտորի, գործընկերներիս, նաև՝ տնօրենի կողմից. ովքեր վկայեցին, որ սովորողները ինքնուրույն ուսումնառողներ են , ուսուցիչը՝ ուղղորդող:

Եզրակացություն

Այսպիսով, նպատակ ունեի հետազոտել մի երևույթ, այն է՝ սովորողների ինքնուրույնությունը, դրա հետ կապված հմտությունների ու կարողությունների խթանումը: Որպես հետազոտող ուսուցիչ ՝ կիրառել եմ մի շարք միջամտություններ և եկել այն եզրահանգման, որ ինքնուրույն ուսումնառության մղող լավագույն միջոց կարող է հանդիսանալ հարցադրումների մեթոդը՝ համագործակցային աշխատանքի համատեքստում:Աշխատանքի հիմնական ծավալն աստիճանաբար ուսուցչից անցավ սովորողին՝ դարձնելով նրան ավելի պատասխանատու և ինքնուրույն:Ուրեմն կարելի է ասել,որ ճիշտ ռազմավարություն էր ընտրված:

Այն ամենը, ինչին ես հասել եմ, ինձ գոհացնում է:Բայց դեռևս տեսնում եմ մի խնդիր, որ անհատից կախված չէ:Գտնում եմ, որ լիարժեք ու ավելի մեծ արդյունք

կունենանք, երբ լինի համադպրոցական մոտեցում:Հակառակ դեպքում, սովորողը մի դասին անկախանում է ուսուցչից, ինքնուրույն աշխատում, զարգացնում մտածական հմտություններ,պլանավորում, ինքնագնահատում կատարում, իսկ նույն սովորողը մի այլ դասի <<հայտնվում է բացարձակ այլ միջավայրում, այլ պահանջներով>>: Կարծում եմ՝ ուղղակի, մոտեցումը պետք է լինի համակարգային և ընդհանրական, հակառակ դեպքում արդյունքը լիարժեք չի կարող լինել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Բիլ Մեյեր, Ն. Հեյվուրդ- <<Ինքնուրույն ուսումնառություն>>,2008թ.

2.Ս. Ռաբաժովա, Խ. Յակուբովա- <<Ինքնուրույն ուսումնառության մեթոդները>>, էջ 204-205

3.Ի. Վ. Աբակումով, Պ. Երմակով-<<Ինքնուրույն կրթության հոգեբանամանկավարժական հիմունքներ>>, 2014թ.

4.Յ. Դուբենսկի-<<ՈՒսումնական մեթոդները որպես ուսումնական գործունեությունն ակտիվացնող միջոցներ>>, 2005թ.

5.ՈՒ. Մեյեր-<<Ինքնուրույն ուսուցում. մեթոդական վերանայում և նոր ծրագրեր>>, 2010թ.